ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Երևան « 24 » փետրվարի 2022թ.

ՀՐԱՄԱՆ № 087-Ա

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԿԱՐԵՆԻ ԽԱԼԱՖՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ 41-27.3-Մ1-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր 41-27.3-Մ1-1) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 22-ի եզրակացությունը և Տիգրանուհի Խալաֆյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրանուհի Կարենի Խալաֆյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր 41-27.3-Մ1-1) պաշտոնին:

2.Փորձաշրջանի ընթացքում Տիգրանուհի Կարենի Խալաֆյանին փորձաշրջանի համակարգող նշանակել կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 41-27.4-Մ1-1)՝ Անահիտ Հովակիմյանին:

3. Տիգրանուհի Խալաֆյանին պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2022 թվականի փետրվարի 24:

Recoverable Signature

X

ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Signed by: DAVTYAN STEPAN 3809890715

Ս.ԴԱՎԹՅԱՆ